# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

01.09.2024



Սիրելի՛ աշակերտներ, ուսանողներ, ուսուցիչներ, դասախոսներ և ծնողներ

Գիտելիքի օրն ավանդաբար խորհրդանշում է երկար ու յուրաքանչյուր մարդու կյանքում կարևոր ճանապարհի սկիզբը՝ դեպի նոր հնարավորություններ և հեռանկարներ:
Անկեղծորեն շնորհավորում եմ բոլորիդ Սեպտեմբերի 1-ի տոնի՝ նոր ուսումնական տարվա մեկնարկի առիթով:
Այս օրը սովորողների համար նոր գիտելիքների և բացահայտումների ժամանակի, ուսուցիչների համար՝ նոր ձեռքբերումների և մանկավարժական հաղթանակների, երեխաների առաջ գիտելիքի հրաշալի աշխարհը կրկին բացելու երջանիկ հնարավորության սկիզբն է: Իսկ ծնողների համար հպարտության և իրենց զավակների ապագայի հետ կապված հույսերը կյանքի կոչելու պահն է:
Սյունիքում միշտ ենք կարևորում կրթությունը, այն մյուս բոլոր ոլորտների զարգացման հենքն ու հաջողությունների գրավականը համարում: Նույնիսկ ամենադժվարին ժամանակներում այն եղել է ու կա մեր հիմնական առաջնահերթություններից մեկը: Եվ գոհունակությամբ ենք արձանագրում, որ մեր ուսումնական հաստատությունները գիտելիքի և կրթության արժանավոր կենտրոններ են:
Հպարտանում ենք կրթական ոլորտում թե՛ սովորողների, թե՛ դասավանդողների ձեռքբերումներով ու հաջողություններով, Սյունիքի անունը տարբեր գիտակրթական նախաձեռնություններում հնչեցնելով: Շարունակե՛ք բարձր պահել մեր մարզի բարի համբավը՝ այս ոլորտում գրանցելով նորանոր նվաճումներ:
Առանձնակի ջերմությամբ շնորհավորում եմ կրթօջախներ առաջին անգամ ոտք դնող փոքրիկներին, թո՛ղ գիտելիքի լույսը ուսումնական տարվա առաջին իսկ օրվանից գրավիչ լինի նրանց համար՝ լի վառ բացահայտումներով:
Թո՛ղ Սեպտեմբերի 1-ը բոլոր աշակերտներին բազում դրական տպավորություններ, երջանիկ պահեր և հաջողություններ բերի:
Բոլոր սովորողներին մաղթում եմ աշխատասիրություն, նպատակասլացություն և հետաքրքրասիրություն, իսկ ուսուցիչներին՝ համբերություն, իմաստնություն և մասնագիտական ձեռքբերումներ:
Եկե՛ք բոլորս միասին աշխատենք, որ մեր մարզում կրթական գործընթացը որակյալ և արդյունավետ լինի: Իսկ գալիք ձեռքբերումների բանալին առկա հզոր ներուժն է՝ հիմնված մանկավարժական փորձված ավանդույթների և նորարար գաղափարների մշտական որոնումների վրա:
Թո՛ղ այս տարին յուրաքանչյուրիդ համար խաղաղ, հաջողակ և արգասաբեր ընթանա:
Բարի՛ երթ 2024-2025 ուսումնական տարուն: